ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՆՇԱՆԱՎՈՐ ԻՐԱՎԻԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեկ ու կես հարյուրամյակ առաջ ադրբեջանական ժողովրդի կյանքում տեղի ունեցավ բախտորոշ իրադարձություն՝ Ադրբեջանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ։ Դա պատմական խոշոր իրադարձություն, շրջադարձային կետ հանդիսացավ ադրբեջանական ժողովրդի կյանքում։ Այդ ակտով նշանավորվեց ադրբեջանական ժողովրդի պատմական ճակատագրի շրջադարձը, կանխորոշվեց առաջադիմության ուղիով Ադրբեջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման հետագա ամբողջ ընթացքը, Ադրբեջանի աշխատավորները հնարավորություն ստացան հաղորդակից դառնալու համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժմանը։

XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում Անդրկովկասի ժողովուրդների համար ստեղծվել էր ռեալ վտանգ՝ հիմնովին կուլ գնալու պարսկական ու թուրքական բռնակալներին։ Անդրկովկասի միացումով Ռուսաստանին, նրա ժողովուրդները, ճիշտ է, չստացան ազատություն և ընկան ցարիզմի ճնշման տակ, ենթարկվեցին գաղութային հարստահարման, բայց այդ բոլորով հանդերձ, Անդրկովկասի միացումը Ռուսաստանին պատմականորեն ուներ պրոգրեսիվ նշանակություն։ Այն ժամանակվա իրադրության մեջ Անդրկովկասի ժողովուրդները կատարեցին միակ ճիշտ ընտրությունը՝ մեկընդմիշտ ու անվերապահորեն կապվեցին Ռուսաստանի հետ, որը, Ենգելսի արտահայտությամբ, առաջադիմական, քաղաքակրթիչ դեր էր կատարում Արևելքի նկատմամբ։ Այդ միացումով Ադրբեջանը ձեռք բերեց զարգացման նոր հնարավորություններ ու հեռանկարներ։ Ադրբեջանը կապվեց տնտեսապես ու կուլտուրապես ավելի զարգացած երկրի հետ։ Նա աստիճանաբար մտավ համառուսաստանյան ու համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ և կանգնեց կապիտալիստական զարգացման ուղու վրա։ Ռուսական առաջավոր հասարակական միտքը, կուլտուրան, գրականությունն ու արվեստը խորն ու բարերար ազդեցություն ունեցան ադրբեջանական ժողովրդի մշակույթի վրա։ Հետագայում Ադրբեջանի աշխատավոր մասսաները հնարավորություն ունեցան միավորելու իրենց ուժերը ռուս ժողովրդի հզոր ռևոլյուցիոն ուժերի հետ՝ լինքնակալության դեմ պայքարելու համար։

Ռուս, ադրբեջանական, վրացի և հայ ժողովուրդների բարեկամական սերտ դաշինքը հսկայական դեր է կատարել անցյալում տիրող շահագործողական կարգերի դեմ մղված պայքարում։ Ժողովուրդների ինտերնացիոնալ տրադիցիաների ստեղծման գործում անգնահատելի ծառայություններ է մատուցել Բաքվի բազմազգ պրոլետարիատը։ Նա իր հերոսական պայքարով փայլուն էջեր է գրել Անդրկովկասի բանվորական շարժման պատմության մեջ։ Անդրկովկասյան ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբվածությունը էլ ավելի ամրապնդվեց ռուսական երեք ռևոլյուցիաների ընթացքում, ինչպես նաև Սովետական իշխանության ամրապնդման համար մղված պայքարում։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան նոր դարագլուխ բացեց ինչպես մեր երկրի մյուս ժողովուրդների, այնպես էլ անդրկովկասյան ժողովուրդների կյանքում. նոր բովանդակություն մտցրեց անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության ու համագործակցության և նրանց ինտերնացիոնալ դաստիարակության մեջ։

Սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում Սովետական Ադրբեջանը տնտեսական ու կուլտուրական վիթխարի վերելք է ապրել։ Երբեմնի հետամնաց երկիրը պատմական կարճ ժամանակամիջոցում ստեղծել է առաջնակարգ արդյունաբերություն ու գյուղատնտեսություն, բարձր կուլտուրա ու գիտություն։ Սովետական հասարակարգը Ադրբեջանում աճեցրեց բարձրագույն ու միջնակարգ կրթությամբ մասնագետների բազմահազարանոց մի բանակ, ժողովրդի առաջ բացեց բազմակողմանի զարգացման, ստեղծագործական ուժերի ու ձիրքերի ծաղկման անսահման հնարավորություններ։ Բարձրացել է ժողովրդի նյութական մակարդակը, վիթխարի գործ է արված ռեսպուբլիկայի աշխատավորների ա-

ողջապահության համար։ Հաջողությամբ զարգանում է տնտեսական ու բարեկամական փոխօգնություն։ Ադրբեջանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների միջև, հատկապես սերտ կապեր են ստեղծվել Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի միջև։ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից սոցիալիստական դեմոկրատիայի երկրներն են ուղարկվում արդյունաբերական բազմաթիվ արտադրանքներ։

Ահա այս խոշոր նվաճումների համար, և նշելով Ռուսաստանի կազմի մեջ Ադրբեջանի մտնելու 150-ամյա հորելյանը, ՍՍՌՄ Գերագույն սովետի հրամանագրով ռեսպուբլիկան պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ռուսաստանի կազմի մեջ Ադրբեջանի մտնելու 150-ամյակին էր նվիրված ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ու ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության ամբիոնների համատեղ հորելյանական գիտական նստաշրջանը, որ կայացավ այս տարվա մայիսի 22-ին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀԿՊ Կենտկոմի երկրորդ բարտուղար Հ. Բաղդասարյանը։ Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Ազայանը («Ռուսաստանի կազմի մեջ Ադրբեջանի մտնելու պատմական նշանակությունը»), ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ադրբեջանական ֆիլիալի սեկտորի վարիչ Ա. Ասադովը («Սովետական Ադրբեջանը ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում»), պրոֆ. Զ. Երիգորյանը («Ռուսաստանի կազմի մեջ Անդրկովկասի մտնելու հարցի լուսաբանումը սովետական պատմագիտության մեջ») և դոցենտ Խ. Բարսեղյանը («Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ինտերնացիոնալ տրադիցիաները»)։

Հ. ՕՀԱՆՅԱՆ

ՇԵՔՍՊԻՐԻ ԾՆՆԴՅԱՆ 400-ԱՄՅԱԿԸ

Այս տարվա ապրիլին խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ լայնորեն նշվեց անգլիական հանճարեղ պոետ-դրամատուրգ, մեծ հումանիստ և փիլիսոփա Վիլյամ Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը։

Շեքսպիրը բացառիկ, անկրկնելի երևույթ է ոչ միայն Վերածնության դարաշրջանի գրականության, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ։ Շեքսպիրի ներդրումը մարդկության գեղարվեստական գանձարանը բարձրը ռեալիստական արվեստ է, որով նա խորամուխ է եղել մարդու հոգեբանության մեջ, բացահայտել բուրժուական իրավակարգի սոցիալական հակասությունները, պայքարել անհատի ազատության համար, պաշտպանել մարդուն՝ հանուն մարդու։ Թեև դարերի վաղեմություն ունի Շեքսպիրի գրական ժառանգությունը (37 պիես, 2 պոեմ, 154 սոնետ), սակայն նա դարերի խորքից չի նայում այսօրվա ընթերցողին ու հանդիսականին, այլ խոսում է նրա հետ որպես իսկական ժամանակակից։ Յուրաքանչյուր դարաշրջան, ամեն մի ժողովուրդ Շեքսպիրի ստեղծագործության մեջ պատմական ճշմարտություն է տեսել, գտել է առաջադիմության պայքարի կրքոտ պաշտպանին։ Մարքսն ու Էնգելսը, Գյոթեն ու Պուշկինը, Թումանյանն ու Խաչատուրյանը Շեքսպիրին համարել են անհավասարելի մեծություն։

Վաղուց է, որ մեծ դրամատուրգի ժառանգությունը մտել է սովետական մշակույթի մեջ. նա միաժամանակ և մեզ է պատկանում, մեր բազմազգ միության ժողովուրդներին, այդ թվում և հայությանը։ Ահա թե ինչու Շեքսպիրի հորելյանը Հայաստանում առանձին շուքով ու հանդիսավորությամբ անցավ։ Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնում տեղի ունեցավ հորելյանական երեկո, Արվեստի ինստիտուտը կազմակերպեց գիտական սեսիա, երեկոներ կայացան գիտությունների ակադեմիայում, հայկական թատերական ընկերությունում, գրականության ինստիտուտում, գեղարվեստա-թատերական ինստիտուտում, հանրապետության մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում և այլն։ Գ. Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունը, հրատարակվեցին Վ. Փափազյանի «Իմ Օթելլոն», Ռ. Զարյանի «Ադամյանի Շեքսպիրը» (ռուսերեն) աշխատությունները, «Շեքսպիրը հայ բեմում» նկարաշարը։

Սրանից հարյուր տարի առաջ հայերը խաղացել են «Մակբեթ», ճիշտ հարյուր տարի առաջ ծնվել է Շեքսպիրի մեծանուն հայ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանը։ Եթե գրան ավելացնենք, որ անցյալ դարի 60-ական թթ. արդեն հրապարակի վրա էին «Համլետի», «Վենետիկի վաճառականի», «Ռոմեո և Ջուլիետի»